Դիանա Աբգարի մասին պատմող «Պետություն չունեցող դիվանագետը» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը

Հուլիսի 6-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում դեսպան Յամադան մասնակցել է տկն. Դիանա Աբգարի մասին պատմող «Պետություն չունեցող դիվանագետը» վավերագրական ֆիլմի ցուցադրմանը: Վերջինս Հայաստանի առաջին հանրապետության պատվավոր հյուպատոսն էր, ով համարվում է աշխարհում առաջին կին դիվանագետը:
Միջոցառման ընթացքում ֆիլմը դիտելուց բացի, որն առաջին ցուցադրությունն էր Հայաստանում, տկն. Միմի Մալայանը՝ տկն. Դիանա Աբգարի թոռնուհին, ով նաև ֆիլմի համահեղինակն է, ներկայացրեց տկն. Աբգարի նվաճումները:
Միջոցառմանը ներկա էին բազմաթիվ հյուրեր, այդ թվում՝ Ճապոնիա-Հայաստան հարաբերություններում ներգրավված անձինք, ովքեր հետաքրքրված են Աբգարի գործունեությամբ:

Դեսպան Յամադայի ողջույնի խոսքը

Տկն. Մալայանի ողջույնի խոսքը

Տոհոկուի համալսարանի ուսանող-հետազոտող տկն. Մեսրոպյանի պրեզենտացիան

Տկն. Մալայանը և տկն. Մեսրոպյանը պատասխանում են հարցերի

Լուսանկար միջոցառման կազմակերպիչ,
ՀՌՀ ավագ դասախոս տկն. Հովհաննիսյանի,
տկն. Մալայանի և տկն. Մեսրոպյանի հետ